ՆՈՐ-ԴԱՐ

№ 141 ՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԻ Ուրբաթ 26 Օգոստոսի | 1888 | Ուրբաթ 26 Օգոստոսի ՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԻ № 141

տարեկան 10 րուբլի, վեց ամիսը՝ 6 րուբլի, երեք ամիսը՝ 3 ր. 50 կ., ամիսը՝ 1 ր. 50 կ., համարը՝ 5 կոպէկ։
Բաժանորդ. գրվում են Թիֆլիսում միմիայն խմբագրատանը։

Խմբագրութեան հասցէն՝ Тифлисъ. Редакція «Нор-Даръ»
կամ՝ Tiflis. Rédaction «Nor-Dar».

Խմբագրատունը բաց է ամեն օր (բացի տօն օրերից) ժամը 9-ից մինչև 2-ը։ Յայտարարութիւնները ընդունվում են ամեն լեզուներով։
Յայտարարութիւնների բառին 2 կ., ռեկլամների համար կրկնապատիկ

«Նոր-Դար»ի Խմբագրութիւնը տեղափոխուած լինելով, Խմբագրութեան գրասենեակն այժմ գտնվում է Բարօնսկայա փողոցում, Հեռագրատան դէմ, № 12 տանը։

Контора газеты «Норъ-Даръ» переведена на Баронскую улицу, д. № 12, рядомъ съ аптекой Цуринова, противъ почто-телеграфной конторы.

«Նոր-Դար»-ին առաջիկայ սեպտեմբերի 1-ից բաժանորդ են գրվում և վճարում են 4 ր. 75 կ.։ Բաժանորդ գրուել ցանկացողները ուղարկում են բաժանորդագինը այս հասցէով՝ Тифлисъ, въ Редакцію газеты «Норъ-Даръ»։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Քրոնիկոն.— Լուրեր Ենայից Ալէքսանդրապոլ (շարուն)։
Թղթակցութիւններ.— Ջալալօղլի։ Նամակ Պարսկաստանից.— Սալմաստ։
Քաղաքական.— Քաղաքական Լուրեր։
Խառն Լուրեր։
«Նոր-Դար»-ի Հեռագիրներ։
Բանասիրական.— Վարժապետը-կալուոր։
Յայտարարութիւններ։

ՔՐՈՆԻԿՈՆ

Թագաւոր Կայսրը Բարձրագոյն հրամայել է փաստաբան Հէնրի Պէրրօին (Henry Perrod) ճանաչել Բաթումում իտալական հիւպատոս։

—

ԵՐԵՒԱՆԻՑ.—Պ. Կոնստանդին Խուդաբաշեանց նշանակուել է Էջմիածնի ս. Սինոդի պրոկուրոր հանգուցեալ Նիկողայոս Տէր-Յովսէփեանի փոխարէն։

Պ. Կ. Խուդաբաշեանը ծառայում է արդէն քանի տարի է Երևանի Նահանգապետի կանցելարիայում. աւարտել է Լազարեան Ճեմարանի լիցէոնում և զարգացած մարդ է։

—

ԷՋՄԻԱԾՆԻՑ.—Վեհափառ Կաթողիկոսը Բիւրականից վերադարձել է և այստեղ պատրաստութիւն են տեսնում Վեհափառի ուղևորութեան համար։ Նորին Օծութիւնը սեպտեմբերի վերջին շաբաթում Թիֆլիս կուգայ։

—

ՇՈՒՇՈՒՑ.— «Նոր-Դար»-ի ընթերցողներին արդէն յայտնի հայ կինը, որի մասին շատ անգամ գրուեցաւ Ասխաբադից և Ուզուն-Ադայից և որի դէմ նրա փախցնող Թուրքը գանգատ էր տուել Շուշու հաշտարար դատաւորին՝ կնոջը մեղադրելով, որ իբր Թէ նա գողացել է իր մի շալը։ Կնոջը, ինչպէս յայտնի է, «էտապով» ճանապարհ էին ձգել դէպի Շուշի, ուր հասաւ օգոստոսի 6-ին և ներկայացաւ հաշտարար դատաւորին, որի մօտ հաւաքուած բազմութիւնն այնքան մեծ էր, որ ասեղ ձգելու անգամ տեղ չկար։ Հաշտարար դատաւորը կնոջից պահանջեց գրաւական մինչև քննութեան օրը։ Թուրքերից շատերը հաշտարար դատաւորին առաջարկում էին 500 մինչև 800 և 1000 րուբլի գրաւական։

Բայց հայերից մէկը՝ երիտասարդ գերձակ Աթա Գափումեանցը տեսնելով, որ Թուրքերը պէտք գրաւականով կնոջ տանեն մինչև քննութեան օրը իրենց մօտ պահեն, ինքն է առաջարկում գրաւականը և կնոջն ազատում Թուրքերի ձեռքից։

Քննութիւնը նշանակուած էր ուրբաթ, օգոստոսի 12-ին։ Համարեա բոլոր Թուրքերը ներկայ էին քննութեան, որովհետև նրանց տօն օրն էր, խանութները փակ էին։ Հաշտարար դատաւորը կնոջն արդար հրատարակելով յայտնում է, որ ազատ է վերադառնալու Ասխաբադ, իսկ Թուրքին մեղաւոր ճանաչելով, դատապարտում է 4 ամսուայ բանտարկութեան։ Սակայն կինը աղքատ լինելով, միջոց չունի վերադառնալու Ասխաբադ. դատաւորը հարկաւոր ծախսը չպահանջեց Թուրքից…։ Սակայն, ասում են Թուրքի գործը կրկին կը քննուի, որովհետև նա մեղադրվում է աւելի մեծ յանցանքներ գործելուն համար։ Կարծում ենք, որ կինը կարող է ինքը գանգատ տալ Թուրքի վրայ և պահանջել հատուցում պատուի և իր բոլոր ծախսերը։ Լաւ կը լինէր, որ մի փոքր փող գումարէին և յանձնէին խեղճ կնոջը՝ Ասխաբադ վերադառնալու համար։

—

Էջմիածնից վերադառնալով Թիֆլիս հասաւ օգոստոսի 24-ին ս. Սարգսի վանահայր և Կոնսիստորիայի նախագահ արժ. Յովհաննէս վարդապետ Շիրակունին։

Որովհետև իբրև լուր հաղորդել էինք, որ հայր Շիրակունին Գօրու յաջորդ է նշանակվում, նորին արժանապատուութեան իր նախկին պաշտօններէ ստանձնելը քաղաքումս ընդհանուր գոհութիւն պատճառեց։

—

ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻՑ. — Հանգուցեալ պրոկուրոր Ն. Տէր-Յովսէփեանին թաղեցին Աշտարակում, որտեղ նա ամառը բնակվում էր։ Հանգուցեալը իր ժառանգներին թողել է իր պաշտօնավարութեան միջոցին խնայած գումարից, ինչպէս ասում են, առնուազն հարիւր հազար րուբլու կարողութիւն։

—

Այս ամառ, ինչպէս յայտնի է տեղական լրագրներից, աւազակապետ Քեարամի մարդկերանցից մինը Գիլիջանի Մէյդան ասուած սարում մի Թուրք սպանեց։ Ահա այդ դէպքի մասին մեզ աջողուեց ամենաստոյգ աղբիւրից լսել հետևեալը. Սպանուածը դագքեասամանցի Ալէքէլ աղի եղբայր Ղուրբան աղա Մուրադովն է, սպանողը—Քեարամը, և ոչ Թէ նրա մարդը։ Սպանութիւնը լինում է հետևեալ պատճառով. Քեարամը Ղուրբան աղին 350 րուբլի է տուած լինում, որ այդ փողերից 50 րուբլին իրեն վերցնէ, որպէս «ջափա փուլի», իսկ մնացածը տայ իր եղբայրներին։ Անցնում է երեք ամիս ժամանակ, և դէպքն այնպէս է բերում, որ Քեարամը պատահում է իր եղբայրներից մէկին և իմանում է՝ որ Ղուրբան աղից իր եղբայրներն ոչինչ չեն ստացել, չնայած յաճախակի տեսնուելիս էին եղել նրա հետ։ Ղուրբան աղի դաւաճանութիւնը վերին աստիճանի կատաղեցնում է Քեարամին. պէտք նկատել և այն՝ որ Քեարամի եղբայրներն ու Ղուրբան աղէն միևնոյն՝ Մէյդան սարումն են լինում։ Օրը ճաշին, բազմութեան առաջ, Քեարամը ձին քշում է Ղուրբան աղի դագի դուռը. այստեղ Քեարամը դառնում է Ղուրբան աղին, Թէ՝ «Ղուրբան աղայ, 350 րուբլին նրա համար քեզ տուի, որ դու ուտես, եղբայրներիս չտաս»։ —«Գլխիդ մատաղ, Քեարամ ջան, ամառ ժամանակ էր, զբաղուած էի գործերով, չկարողացայ անձամբ եղբայրներիդ մօտ գնալ, իսկ նրանք էլ չպատահեցին, պատասխանում է Ղուրբան աղան։ «Ո՞ւմ ես խաբում, նամարդ, դու այնպէս զբաղուած էիր, որ մի ժամ ժամանակ չգտար ձիդ քշելու եղբայրներիս դագի դուռը. քեզանից հօ շատ էլ հեռի չեն, միևնոյն սարումն են. միԹէ ես քեզ այդպէս էի ճանաչել. տօ նամարդ, մարդ զտար խաբելու, ասում է Քեարամը և ուղղակի կրակում է Ղուրբան աղայի կրծքին ու անցնում գնում։

—

Տէր-Առաքել Աղիզեանցի և Համազասպ Ալեդրամեանցի գործը, որ նը-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՎԱՐԺԱՊԵՏԸ-ԿԱԼՈՒՈՐ

(Գիւղական կեանքից)

—

Կալի հարևանութեան պէս էլ քաղցր բան ինչ կը լինի։ Ով ուզում է բարեկամութեան և սիրոյ մասին ճիշդ գաղափար կազմել, գնայ լինի կալուոր, տեսնէ Թէ ինչպէս իրար հետ սիրով են և անձնուէր։ Ամառ ժամանակ աշխատող ույժերը տանից փոխադրվում են կալը։ Աշխատում են երիտասարդն ու չափահասը, հարսն ու աղջիկը, ծերն ու պառաւը։ Ամենքը իրենց կարողութեան չափ, ոչ մինը աշխատանքից չէ փախչում. լաւ գիտեն, որ ամառուայ փուչը ձմեռուայ նուշն է։ Հարսները նստոտած դէզի շուաքում խրձներից ատոք հասկերն ընտրելով փնջեր են կապոտում, Թակում մահակներով և մաքուր ցորենը ջոկում։ Այսպիսի ընտրովի ցորենը կոչվում է կ ր տ ա ծ ս ե ր մ։ Իւրաքանչիւր աշխատաւոր կրտած սերմացու է ունենում։ Մի քանի տարուայ մէջ կրտած սերմը կորցնում է իր արժանիքը, ուստի նորից կրկնում են ատոք հասկերից ջոկել ու ընտրովի սերմ պատրաստել։ Կրտած սերմից ստացած ցորենն այնպէս հրաշալի բերք է լինում, որ մարդ ափսոսում է մի ձեռքից միւսն անելու մի գուցէ գետին Թափուի։ Մանկահասակ կալուորը գիշերհանայ նախրին է վազում ոտով կամ էշ նստած լծկանները բերելու. Նա որ կայ, ձեռնակալելի պէս բան է, ուր գցում ես, գնում է Թող լինելով առանց ուսով ետ նայելու։ Մխիթարուած է այն հայրը, որ մի քանի կալուոր տղայ ունի, Թէ չէ նա հարկադրուած պէտք վարձու ոքմիններ բռնէր՝ իւրաքանչիւրին օրական 3—4 չանաղ ցորեն տալով։ Կալը որ կայ, ջանը սաղ ռաշպարի համար մի կատարեալ հարսանիք է. լուսաբէքին մարդ պէտք է կալերի մօտով անցնի, տեսնէ ինչ կեանք է եռ գալիս գիւղացու մէջ։ Կալի ջրին անգամ իր համն ունի. մի տեղ Թոխի են տալիս խոտերը, չալերները պոկոտում, աւելորդ հողի հետ կալի ափին եռանդի պէս ածու շինում ու ջուրը կապում կալի մէջ, միւս տեղը մղանը ձեռքին բոբիկ ոտով ջուրը մէկ դէսն է խըրկում, մէկ դէն, մի քանի բոպէում կալը չորսուբոլոր ջրում ու վրէն դարման շաղ տալիս, երրորդը դարման է կրում օրանի սայլով, չորրորդը դեռ նոր է կամարաձև կալի քոլը շինում, որ շուաքարան լինի արևի ձեռից. բայց ամենքն էլ փ չ ո շ ի կ, անփոյԹ հագնուած, մի մի Թասակ գլխներին, կամ Թաշկինակ պատ տուած, անգօտիկ, առանց վանգաալաններին, առանց չուխի։ Ո՞վ է հարցնողը, Թէ հագիդ արխալուղ կամ չուխայ չունիս. շատ էլ հարցնես, ինչ պատասխան կստանաս. խկլի ժամանակ գտնում է, կամ արևն ու քրտինքը մաշել են տալիս ռաշպարին։ Օրական Թէկուզ մինը լինի, որ ռաշպարին փոխնորդ վրայ հասցնել, էլի կը տեսնես, որ քրտինքի ձեռից շալվին ու ոտաշորը կեչակալած, լամբակալած լաշի վրայ ղաղաչ են դարձել. կասես գոմշի կաշի լինի։ Ռաշպարի մայրը չմեռնի, նա է որ դիմանում է այդքան ցաւ ու կրակին, Թէ չէ մենք՝ մէջ ուտող ղրաղ մանեկողներս ինչացու ենք։

Գիւղացի մարդուն զգալի եղած կը լինի, Թէ ինչքան ախորժ է Թւում հաշանի հոտը։ Այժմ ժամանակն է, որ ընԹերցող, քեզ ասեմ իմ կալուոր դառնալուս հանգը, կերպը միայն լսելու համար, իսկ եԹէ դու էլ ցանկանաս և ինձ հետևիս, սկզբից համբերութիւնդ լաւ մխիր, որ ամեն տեղ չծալուիս։ Մեր տնեցիք ամենքն էլ կալուումն էին. ես էի տնպահ մնացել, ոչ ոք չէր ստիպում, որ կալին օգնեմ. այնպէս էին հաւատացած, որ ինձ անյարմար, անպէտք անգամ էին համարում։ Բայց ախր, փառք Աստուծոյ, ես ոչ կաղ էի, ոչ չոլախ, ոչ քոռ, ոչ ճլերք. ընդհակառակն իմ ամուր կազմուածքի վրայ շատերը նախանձում էին։ Բայց ինչի՞ անգործ եմ. ասենք արձակուրդի ամիսներ են, միԹէ հոգաբարձու Տէր. Պ. այնքան խիստ կը լինի, որ պէտք արգելէ, Թէ ինչի՞ ամառը իր վարժապետը կալուոր է դարձել։ Այդ դարհուրելի բծախնդիր ադամորդի չի լինել, «համա չուռը սըպանի», մենք մեր բանն ասենք։ Խիղճս տանջում էր, ամօԹն ինձ խեղդում էր, որ պարապ-սարապ երիտասարդ պարոնների հետ Թրև եմ գալիս, իսկ հարազատ կըրտսեր եղբայրներս արևի տակ աչխատում են։ Ձեռքերս կակուղ էին, մատներս գողտրիկ, չէին փշտած երբէք, և ինչի՞ պէտք փշտէին, գրիչն ու գիրքը ինչ զոռ ունէին, մաճ խօ չէի բռնել։ Ռաշպար եղբայրներիցս ոչ մի բանով պակաս չէի, ինձնից կրտսերի ձեռքերն աշխատելուց Թխացել էին, իսկ իմը ոչ սպիտակ էր, ոչ Թուխ։ Այն յարգանքը, որ սովոր էի տալու ինձ, հետզհետէ աչքումս նուազում էր, որովհետև ռաշպարին հեռուից սիրող մարդը, շարունակ նրա անունով երդուող մարդը, նրանց համար բանաստեղծութիւններ գրող մարդը, այժմ վախենում է մօտենալ—նրան մօտիկից քննելու, սիրելու, մանաւանդ որ ռաշպար գտնելու համար կարիք չկար սար ու ձոր անցնելու, այլ մեր գերդաստանն էր, մեր կալումը։—Հայրս ու եղբայրներս ինձ խստակ և մաքուր հագած տեսնելով, քաշվում էին Թէ ասեն չորերդ փոխիր, կալն արի, մի գուցէ անխորժ Թուի ինձ նրանց առաջարկը, կամ կալի Թօզը վրաս նստի։ Անխօս գնում էին աշխատելու, միայն չէին իմանում, Թէ ինչ պատերազմի մէջ եմ ես ինձ հետ։ Ինձ ու ինձ երկար ու բարակ մտածեցի, վեր դրի, վեր հանեցի ու վճռեցի այսպէս—ռաշպարին իր հալալ աշխատանքի համար աշխարքս է գովում և նրան մինչև երկինք բարձրացնում։ Գովողների, երկրպագողների Թւումն ենք և մենք կարդացողներս, գրի սև ու սպիտակ ճանաչողներս, որ տեղն ընկած տեղը ամբարտաւան ենք, գլուխներս չի վերցնում մի քիչ կոշտ բանի ձեռ տալու։ Ո՞վ չէ իմանում, որ բերան ունեցողը հաց է ուտում, իսկ հացակերը պէտք աշխատի, քրտնի։ Մենք մաքուր հագնուողներս ինչ փառքից պէտք զրկուենք, եԹէ գիւղում ապրելով, մեր գիւղացի հարազատ եղբօր հետ լուծքաշ լինենք։ Ո՞ր խելօք մարդը տնալ կանի, բացի տխմար քամի կուլ տուողներից։ Բաւական էր, որքան որ ինձ նմաններին կոչեցին «մէջ ուտող ղրաղ մանեկողներ»։ Ես, սիրտ անեմ, ռաշպարութիւն անեմ, տեսնեմ ինչ համ ունի մօտիկից։ ԵԹէ մի երկու հոգի ծաղրեն, Թէ փլանը գնացել է մշակութիւն անում, շատ շատերն էլ կը հաւանեն, կը գովեն ու կը գան ընկեր կը դառնան, իսկ այն երիտասարդ պարոնները, որոնց հետ միշտ հովեբում Թրև էի գալիս, եԹէ ցանկանան ինձ տեսնել, լիշել, Թող մտաբերեն.— (խան մանի խասիէր, Տանձիս գալսն»։

Այսպէս մտածելուս հետևանքն այն եղաւ, որ վճռեցի գնալ կալ և եղբայրներիս հետ հաւասար աշխատել ու քրտնել։ Իսկոյն շորս փոխեցի ու գնացի. իսկ դուք, սիրելի ընթերցողներս, լսեցէք, ինչ աղի է իմ կալուոր դառնալս։ Դեռ կալը չհասած, Թէ մերոնք, Թէ հարևանները ձայն տուին.

—Ոտնամուտդ բարի ըլի, վարժապետ, համեցէք, փեշքէշ է կալն էլ, լծկանն էլ։

—«Բարաքաւոր ըլի, ողջ ըլէք, շնորհակալ եմ, պատասխանեցի ու խրձան շուաքը քաշուելով նստայ։ Ուշ էր գնացել, գրեԹէ կալը կասուել, շանակուած էր օգոստոսի 24-ին, յետաձգուած է կարևոր վկաների բացակայութեան պատճառով։

—

«Նոր-Դար»-ի ընթերցողը յիշում է, որ էջմիածնից Ներսիսեան դպրանոցը քննելու կամ, ինչպէս ասում են, րէվիզիա անելու համար եկել էին Թիֆլիս գեր. Մամբրէ եպիսկոպոս Սանասարեանցը և պ. Սեդրակ Մանդինեանը, որոնք ամենայն բարեխղճութեամբ և ամառնային անտանելի շոգերին գովելի համբերութեամբ մի 45 օրուայ ընթացքում կատարեցին իրենց առաքելութիւնը։

Գեր. Մամբրէ սրբազանը և պ. Ս. Մանդինեանը եղած էին Ներսիսեան դպրանոցի շինութեան մէջ և իրենց նիստ ու կացը, կանխաւ եղած կարգադրութեան համաձայն, հոգացվում էր Ներսիսեան դպրանոցի ծախքով։ Այդ մասին խօսք չունենք, այդ հասկանալի է։

Բայց մի բան անհասկանալի է, որ և հենց այստեղ կամենում ենք արձանագրել. ասում են, որ այդ ծախքի հաշիւը մի պատկառելի գումար է ներկայացնում. այսպէս հաշուի մէջ դրած է 160-ից աւելի շիշ գինի, իսկ ծախքի գումարը 300 ռուբլուց անցնում է...

Եթէ այդ հաշիւը ուղիղ է, այն ժամանակ կարող ենք երևակայել նրանց զարմանքը, որոնց համար եղել է այդ ծախքը. դրանք չպիտի հաւատան իրենց աչքերին, կարդալով այդ հաշիւը։ Այստեղից երևում է, որ գեր. Մամբրէ սրբազանը և պ. Սեդրակ Մանդինեանը իրենց առաքելութիւնը լրիւ չեն կատարել. նրանք պէտք է և իրենց համար եղած ծախքերի հաշիւը պահանջէին և այդ էլ քննութեան առնէին, այն ժամանակ գուցէ հաշիւը մի փոքր չափաւոր լինէր։ Ինչպէս երևում է, Ներսիսեան դպրոցը շատ փող ունի...

—

ՎԵՐԻՆ-ԱԳՈՒԼԻՍԻՑ.—Տեղիս ս. Յովհաննէս եկեղեցու արջաձորցի Մովսէս քահանան իւր վատ արարմանց և աններելի յանցանքների համար պէտք էր՝ ս. Սինոդի տնօրինութեամբ՝ սաղմոսը ձեռին և փիլոնով՝ երեք ամիս ապաշխարանք կրէր Անապատի կոչուած սուրբ Աստուածածնի վանքում. սակայն, երրորդ ամիսն է անցնում, և դա՛ իւր համար որոշուած պատիժը չէ կրում։ Թէև գաւառիս արժ. գործակալը քանի քանի հրամաններ է գրել այդ քահանային, հիմնուելով բարձրագոյն իշխանութեան հրամանի վրայ, բայց նա, փոխանակ հնազանդուելու իշխանութեան հրամանին, դուրս է գալիս ամեն օր շուկայ։ Յոյս ունինք, որ մերձաւոր հոգևոր իշխանութիւնն կաշխատի շուտով առաջն առնել այդպիսի զանցառութիւնների, որոնք գայթակղեցուցիչ են թէ ժողովրդի և թէ միւս քահանաների համար։

Եւ պէտք է չմոռանանք ասել, որ դա այն բժիշկ կոչուած քահանան է, որ իւր սուտ ու մուտ դեղահատիկներով իբր բժշկում է թէ աչքացաւ, թէ ատամնացաւ, թէ փորացաւ, թէ գլխացաւ, թէ բկացաւ և մեծ մասամբ իւր դեղահատիկներով, որ պատրաստում է թթի չորացրած տերև հետ խառնելով մի քանի ուրիշ նիւթեր, որը վնասակար և որը անվնաս և այդպիսով շարունակ նա իւր հեքիմութիւնն անում է՝ խեղճ ընտանիքներից կոպէկները ստանալով։

—

ՇՈՒՇՈՒՑ. — Մարդասպանութեան քիչ դէպքեր էին պատահում մեզանում, բայց այժմ արդէն մօդայ է դարձել դա։ Դրա պատճառներից մինն էլ թղթախաղն է։ Թուրքերն և հայերը միմեանց հետ թուղթ են խաղում գինետներում և քաղաքիս շրջապատող պարսպի բուրգերում։ Աշակերտների մէջ անգամ տարածուած է այդ ախտը։ Դժբաղդութեան մէկն էլ այն է՝ որ ամեն մի Թուրք և հայ երիտասարդի ձեռին բէյբութ ասուած սուր է գտնվում և ատրճանակ, այնպէս որ միմեանց հետ խօսելիս, իսկոյն միմեանց ատրճանակն են ցոյց տալիս և բէյբութը։ Այս օրերս օրինակ պ. Ա. Մ. մի գինետան մէջ թուղթ խաղալու ժամանակ, 50 կոպէկի համար վերցնում է բէյբութը խրում մի թմբկահարի սիրտը, որից իսկոյն խեղճը մեռնում է։ Օգոստոսի 8-ին, քաղաքիցս դուրս մի Թուրքի սպանուած դիակ են գտնում. բժշկական քննութիւն անելուց յետոյ, յանձնում են Թուրքերին թաղելու։ Պատմում են, որ սպանուածը յայտնի աւազակապետ Խզըօղլի Ալու ընկերն է եղել, որին բռնելու ժամանակը փախել է. Նրան սպանելուց յետոյ մի քանի օր է քաղաքիս գողութիւնները վերջացել են։ Քաղաքիցս մօտ 7 վերստ հեռաւորութեամբ գտնուող Շուշի գիւղից մի երիտասարդ գնում է անտառից մի բեռը խոտ բերելու. վերադառնալու ժամանակ անյայտ չարագործները սպանում են քաջ երիտասարդին և 4 գողացած ձի սպանուած դիակի մօտ թողնելով անյայտանում։ Ամբողջ գիւղը այդ երիտասարդին էր պաշտպանում. աւազակներից ոչ ոք չէր կարողանում այդ գիւղից մի ճուտ անգամ գողանալ։ Գիւղացիները արտասուելով են պատմում այդ դէպքի մասին։

—

Ինչպէս յայտնի է, Ալէքսանդրա Նիկիֆորովայի գործի քննութիւնը նշանակուած է սեպտեմբերի 3-ին։ Այդ առթիւ լուրեր էին տարածուած, թէ գործի քննութիւնը դռնփակ պիտի լինի։ Բայց այժմ լսվում է, որ գործը պիտի քննուի դռնբաց և մուտքը առանց ո և է տոմսի։

ԵՆԱՑԻՑ ԱԼԷՔՍԱՆԴՐԱՊՕԼ *)

(Տպաւորութիւններ)

—

Թիֆլիսից Ալէքսանդրապօլ

—

Թիֆլիսում սովորական շքով կատարուեց Ներսիսեան Դպրանոցի անմոռանալի Էփէնդեանի հոգեհանգիստը, որին ներկայ էի, թէև դպրանոցից ինձպէս անցորդն աւելին կարող էր սպասել։ Այնու ամենայնիւ թէ այս հիմնարկութեան, թէ հասարակութեան և թէ կրօնաւոր դասի կողմից կային բազմաթիւ երախտագէտ սրտեր, որոնք երաշխաւորել էին կամենում, որ բարերարի անունը սերնդից սերունդ պէտք է յիշուի։

Ես արդէն մտադիր էի կուսանաց վանքը գնալ, և սրան առիթ տուեց մեր միւս բարերարի՝ Յովնանեանի հոգեհանգիստը, որին ներկայ էին բացի հասարակութենից՝ Յովնանեան օր. ուսումնարանի աշակերտուհիները իրենց վարժուհիներով։ Այս վանքը իւր մայրապետով, կոյսերով և միաբանութեան ամբողջութիւնը լրացուցիչ քահանայով մի հիանալի տպաւորութիւն է գործում մանաւանդ այն անձնաւորութիւնների վրայ, որոնք այս վանքը կամ ամենեւին կամ վաղուց չեն տեսել։ Այս միաբանութեան ժամասացութիւնը, պատարագն ու սպասաւորութիւնը իրենց միաբանութեամբ մի այնպիսի հոգեզմայլ ամբողջութիւն են կազմում, որ հանդիսականը յափշտակուելով՝ մոռանում է աշխարհայինը։ Մի անցորդի սրտի ցնծութիւնն անչափ է լինում, երբ նա մի քաղաքում, ուր առօրեայ կեանքում բարքի ու վարքի չասենք վերջնական անկում, գոնէ ուժգին տատանում է տեսնում, ասում եմ, մի այսպիսի քաղաքում կրօնական-բարոյական կեանքի մի հժիւ նեցուկ է գտնում։ Եթէ ինձ պէս մի անցորդի վրայ այս սրբավայրը մի այսպիսի խոր տպաւորութիւն է գործում, ապա որքան ևս առաւել մեծ կը լինի նրա ազդեցութիւնը մերազնեայ այն կուսանների և տիկինների վրայ, որոնք դիտմամբ թէ պատահմամբ, սրտանց թէ լոկ հետաքրքրութիւնից դրդուած՝ մերթ ընդ մերթ իրենց սովորական ճանապարհները փոխում և դէպի այս մեր հայկական կրօնական-բարոյական կեանքի պարծանքի վայրն են դիմաւորում։ Ես ճգնում էի որքան հնար էր, իմ երևակայութեան այնպիսի ուղղութիւն տալ, որին այս կուսանոցի ամբողջութիւնն երբեք օտարազգի ըմբռնէր, և ինչ. այդ վայրկեանում ես զգում էի, որ եթէ ես կաթոլիկ կամ լութերական լինէի, շատ պիտի նախանձէի հայութեանը, որ տակաւին ունի կուսական կեանքի այսպիսի յաղթանակներ։ Կաթոլիկ ուղևորը կը նախանձէր մանաւանդ մեր կոյսերի և կուսանոցների բարոյական ազատութեան վրայ, որով այս հիմնարկութեան միաբանների բարոյական ազդեցութիւնը ոչ միայն չէ նուաղում, այլ աւելի զօրանում է։ Ես երևակայում եմ մօտաւորապէս, թէ որքան ազդեցութիւն պէտք է ունենայ բարոյական հեղինակութիւն ունեցող կոյսի ներկայութիւնը հայ ընտանիքի մանաւանդ կանանց վրայ։ Բողոքական ուղևորն էլ կը զարմանար, թէ ինչպէս մեր պարզ հնադարեան եկեղեցին իւր, եթէ կարելի է համեմատական տեսակէտից այսպէս ասել, բնական պայծառութեամբ բաց է անում մարդու սրտի դռները և հոգին սթափեցնում...

Գուցէ ընթերցողս սպասէ, որ ես Թիֆլիսի այլ եկեղեցիների մասին էլ խօսեմ, սակայն որովհետև նրանք մեր կեանքում կուսանոցի մէջ բացառիկ դիրք չունին, ուստի ես նրանցից ստացած տպաւորութիւններիս մասին խօսելը զանց եմ առնում։ Միայն այսքանս ասեմ, որ մեր երջանկայիշատակ Գէորգ Դ-ի ազդու կամքով տարածուած ձայնագրութեան շնորհիւ՝ մեր եկեղեցին դրանով աւելի պատկառելի տպաւորութիւն է գործում ուղևորի վրայ. իսկ այն եկեղեցիները, ուր հին և նոր երգողների մէջ ներդաշնակութիւն չկայ, մարդիս սիրտը շատ վիրաւորվում է։

Եկեղեցիների ճանապարհը պէտք է ինձ բնականաբար տանէր և մեր ուսումնարանները։ Ես դէպք ունեցայ 10—12 օր Ներսիսեան դպրանոցի հարցաքննութիւններն այցելելու և մի անգամ էլ Գայիանեան ուսումնարանի դասաւանդութեանը ներկայ լինելու։ Ուսումնարանի մասին ես կարող եմ գրել կամ հիմնաւորապէս կամ ոչինչ։ Ուստի ես այստեղ բաւականանում եմ միայն յիշել, որ Գայիանեան ուսումնարանի տեսչուհի օր.

---

*) Տես «Նոր-Դար» № 140.

աւարտվում էր. մերոնցից ոչ մինն էլ մտքով չէր անցկացնել, որ եկել եմ կալին օգնելու։ Ռաշպարը ինչ կը կարծէ, որ կալուորը ճաշքուն տայ ու նոր ճլէմկոտալով կալի վրայ ոտը փոխի։ Ինչ էլ ասէին, վրաս չէր ազդել, մի անգամ վճռել էի։ Մի քառորդ ժամ նստելով, տեսայ, որ ինձ բան չեն առաջարկում, ինքս խնդրեցի։

—Ինչ կայ ձեր կալում ինձ պէս անշնորք հացակերի համար, վախեցս ինձ նուաստացրի, մի՛ գուցէ ինձ այնպէս գործ յանձնեն, որ չը բաշարեմ ու ամօթով մնամ, այն էլ ում մօտ—ինձնից կրտսեր եղբայրներիս մօտ, որոնց մէջ 10—13 տարեկաններ կային, ինձ նման եօթի բան էին շինում, կատակ անելով ամեն մինը մի բան առաջարկեց, մինն ասեց, եղեր, միւսն ասեց, մղանէր. երրորդն ասեց, քշեր։ Ամենքն էլ ժպտում էին վրաս, բայց, փառք Աստուծոյ, ծաղրելուց հեռու էին, գիտենալով, որ ծաղր ու մասխարութիւն տանող չեմ։ Թէև այդ բոլորին ինքս ինձ վրայ ծիծաղում էի. ախր մարդ գիւղացի լինի, գիւղումն ապրի, հաց ուտելու շնորք ունենայ, ու հաց վաստակելու ձեռ չիմանայ, այս ի՜նչ Աստուածը կընդունէր։ Հայրս նկատելով յօժարակամ առաջարկս և գուշակելով միտքս, նախ հեշտ բան տուեց, որ չը խրտնեմ։ Ջաւն տուեց.

—Մի աւել տուէք կալի ափները սրբի։

Փոքրիկ եղբայրս վազելով աւելը բերեց, սկսայ աշխատանքս—չորս ու բոլոր կալի ափների շաղ անցած ցորենները աւելով ժողովել։ Իմ վերջացնելուն պէս լծկաններն բաց թողին, նշան էր, որ կալը դուրս է ընկել, բայց դեռ չի պրծել։ Վերարկուս հանեցի, երբ տեսայ մղանները հարևանի կալերից բերին ու կասուածը կիտեցին երկայնաձև հարաւից հիւսիս. գոյացաւ մի փառաւոր թեղ։ Սրբելու պաշտօնս շարունակեցի շատ թունդ, երեք հոգու չափ բանում էի, քրտինքը ջրի պէս գնում էր, ո՞վ է ուշք դարձնում, գլուխս քաշ արած սրբում եմ։ Կողքիս կալից լսում եմ խօսում են—սեւ, տես վարժապետն էլ է բան անում։ Ժողովրդի կարծիքով, չգիտեմ ինչու, վարժապետը չպիտի բանէր կալում կամ հանդում, Նադիր-Շահի տղան էր, թէ Փլթոյի թոռը։ Սարի նման թեղը պատրաստ էր. Ներքի քամին (արևելա-հիւսիսային կողմից) փչում էր, հայրս ու եղբայրներս սկսեցին հորսելով գցել, քամ անել։ Ես մի կողմ նստած զուարճանում էի, երբ հորսելու բերանին նայում էի։ Շատ բան կար կալում շինելու, ամենքն էլ գործի էին, ես էլ պարապ, չգիտէի, ինձական բան չկար, թէ ժամանակ չունէին ինձ բանու գլխի դնելու։ Շուտով նկատեցի, որ միակ պատճառը նորեկ լինելս էր, նոր իմացայ, որ ռաշպարի իւրաքանչիւր աշխատանքն իւր յատուկ հմտութիւնն էր պահանջում, որից ես բոբիկ էի. ինչպէս քաշալ Ալէքի տղէքը բոբիկ էին ծրեխներից։ Իմ վարժապետական բոլոր հմտութիւնս փո՛ւ։ Երբ հորսելին բարձրացնում էին, քամին մղեղը փախցնում էր, դարմանը կալի մի կողմ քշում, իսկ ցորենի հատիկները շըրխալէ՛ քամողի առջև թափւում, իմ քէֆը գալիս էր։ Ասում էի, մ՛ա երբ պիտի ես էլ քամ անել իմանամ։ Աղասու պէս ուրախ տրամադրութեան տակ աչքերըս արտասուքով լցուած, կարծես հոգով վերացած երկնային բերկրանք վայելելիս լինէի։ Թեղը հալվում էր, եղբայրներս քամու առատ գալու վրայ ուրախանալով ցնծական ճիչ ու աղաղակ էին արձակում։

—«Ե՛ քու ստեղծողին մատաղ, Ե»։

Նոյն ուրախական ձայները լսվում էին շրջակայ կալերից։ Ես զմայլած այս գրաւիչ տեսարանով, մտաբերեցի անմահ Վիրգիլիոսի իմաստալից հառաչը. «Ա՛խ, ո՜ր էր թէ գիւղացիներն իրենց բաղդը գնահատել իմանային»։ Աշխարհիս ոչ մի մահկանացուի բաղդաւորութիւնը չէր հաւասարեցնել քամ անողի այդ վայրկենական բաղդաւորութեան, որ ամեն հոգ, ամեն դարդ մոռացած, քամակը գցած քամում է ու երգում, խնդում, ծիծաղում։ Սրտով ցանկացայ, որ տեղիցս վերկենամ, ես էլ քամ անեմ, բայց մտածեցի, որ խօսիա եմ. դեռ հորսելի բռնելու ձեռ չգիտէի. ինչ անենք, որ մանկավարժ էի։ Այդ օրը չթողին կալում երկար մնամ, շուտ արձակեցին տուն, որ իմաց անեմ հաց-ջուր ուղարկեն։ Երբ հեռանում էի, իսանեցս լսեցին։

—«Կալի տուած դասը թունդ հօ չէր. սա էլ փալախա ունի»։

—Ինչքան էլ թունդ ըլի, Տէր Պօղոսի ձախլիկ ապտակից թունդ չի լինել, պատասխանեցի ես։

—«Էգուց կերևայ, վրայ բերին ամեն կողմից, թէ խամ արջառի պէս ո՛նց ես լուծվիլս տալիս»։

Դա մի պատուական կոթող էր իմ ինքնասիրութեան. ուստի վճիռս աւելի ամրապնդեցի, որ ամեն ճիգ գործ դնեմ այդ աւելորդ կասկածը վերացնելու ինձպէսների վրայից, որպէս գիւղացիները հաւատայ, թէ ամեն կարդացող (ինչպէս իրենք են ասում) անտարբեր չէ նայում երկրագործութեան վրայ, այլ որ կարող են լինել իրենցից տոկուն աշխատողներ։ Այս մտածեցի ու քնեցի այն վճռով, որ դեռ մթնով առաւօտը կալում լինիմ։ Վա՛յ էն հալին, որ ես քնեցի, տասն անգամ ինքս ինձ թարթժած արի. որձակի «Ծուղրուղուն» լսելու կարիք չունէի։ Զարթուն էի, բայց չգիտէի կալ գնալու ճիշդ ժամանակը երբ է։ Շատ շուտ գնայի, կը ծիծաղէին. ուշ գնայի, նոյնպէս։ Այսպէս անհանգիստ քնել եմ մէկ էլ 14 տարի առաջ, երբ հայրս յայտնեց երեկոյեան, թէ վաղը քաղաք (Թիֆլիս) վանքի ուսումնարան պիտի տանեմ. այն ժամանակ եթէ չքնեցի, գոնէ մօրս խրատներն ու հրահանգներն էի լսում. բայց այժմ այնպէս չէր, մայրս չգիտէր, թէ իւր վարժապետ-որդին ինչ մտածմունքով է տանջվում։ Վերջապէս վերկացայ, հինմաշ շորերս հագայ և ուղղուեցի կալը։ Աղջամուղջ մութն էր. պահապան շներն կալերում հաչոցն սկսեցին իմ ստուերը տեսնելուն պէս։ Սուրխանանց Քոսոտը շան հաչոցից թարժած եղած քոցին-քոցին էր անում, Եավշանց քոռ Պօղին աչքերը հաղաղում, զուռնաները թափահարում։ Կալից լաւ տեղ, թեղից լաւ տեղաշոր։ Գէլին խշուրի մէջ էր խոզի դոճու պէս տապ արել, Պետին հաշանի գլխին էր երկինք իրեն եօրղան շինել, մրափել, Կոնին ցորենի կոնտակի վրայ էր գըլուխը թիուն դրել փռշտացնում։ Մերոնք էլ սրանց պէս այստեղ այնտեղ քնոտել էին. հենց որտեղ ննջը տարել էր, մնացել էին պարկած։ Չորս հոգով ամբողջ օրը չարչարուել էին, էլի առաւօտեան էին թողել։ Երբ ընտելացայ ռաշպարութեան մանրամասնութիւններին, նկատեցի, որ ռաշպարի անվախ սիրտը միայն կալերն է վախենում, կալից զոլխանայ բան չկայ համարեա։ Կալուորի բանը անհատնում է, նրան հանգստութեան ժամ չկայ, նա չպիտի նստի, հենց ոտի վրայ ման գայ կալի մէջ և շուրջը։ Նա պիտի կամ եղի կամ քշէ կամ նետայ, կամ մղանէ, կամ փոցխէ, կամ աւլէ, մի խօսքով անընդհատ բանի, թէ չէ նրա թեղը ներքի (արեւելեան) քամով չի քամուի, կընկնի գէշերուայ այգոր (արևմտեան քամի)։

(Կը շարունակուի)

Քալանթարեանցն և դասատու վարժուհին ինձ վրայ իրենց լրջութեամբ լաւ տպաւորութիւն գործեցին։ Աշակերտուհիներից ստացած ընդհանուր տպաւորութիւնս մխիթարական էր։ Բայց սակայն թէ այս ուսումնարանը որքան է կարողանում համապատասխանել ներկայ ծրագրի և կեանքի պահանջներին, այդ խնդրով պարապելու ժամանակ չունէի։ Ես մինչև իմ հայրենի քաղաքը հասնելս, և այստեղ դէպք ունեցայ և՛ այլ շատ ուսումնարանների քննութիւններին ներկայ լինելու, բայց անպատեհ եմ համարում նրանց արդեանց մասին կարծիք յայտնել։ Ես, իհարկէ, կաշխատեմ տեսածներս, լսածներս չմոռանալ և երբ գործնականապէս կ'ուսումնասիրեմ մեր ուսումնարանների արդի դրութիւնը, այն ժամանակ կը կարողանում ասել, թէ ներկայ պահանջներից որը կարելի է լցուցանել, որը մեր գործող ոյժերին դժուար և որը անկարելի է։ Միայն այսքանը ես այժմ կարելի է ասել, որ մի քանի ծանր պահանջներ տեսայ, որոնց դէմ մրցելը ինձ անհնարին չասեմ, գոնէ շատ դժուար է, իսկ միւս կողմից տեսայ թերութիւններ, որոնց լցուցանելը դժուար պէտք է չլինէր։ Գալով Ներսիսեան դպրոցին, թէև այս նշանաւոր հիմնարկութիւնը շատերին առանձնապէս հետաքրքրէր, սակայն ինձ վայել է խուսափել նրա մասին խօսելուց, որովհետև այնտեղ այնպիսի անձնաւորութիւններ կային, որոնք ՚ի պաշտօնէ և շնորհիւ իրենց անցեալ գործունէութեան՝ այդ քաղաքում և դպրոցում աւելի ձեռնհաս էին, ուր հարկն է, իրենց հիմնաւոր դիտողութիւններն անելու։

Ես այցելութիւն արի նաև սբ. Առաջնորդին, Գեր. Մամբրէ եպիսկոպոսին և պ. Մանդինեանցին, որին առաջին անգամն էի տեսնում։ Թէև ես շատ էի ցանկանում այս անձնաւորութիւններին աւելի մօտ ծանօթանալու, սակայն թէ նրանց ժամանակի սղութիւնը և թէ իմ շտապելը այդ ցանկութիւնս լցուցանելն անկարելի արին։

Նախ քան գրիչս շարժելը՝ ես քիչ չմտածեցի այն խնդրի մասին, թէ արդեօք ինչ և ինչպէս գրեմ մեր խմբագիրների մասին։ Այս աշուն ճանապարհով անսայթաք գնալն այնքան հեշտ պէտք է չերևար ինձպէս մի երիտասարդին, որ նոր էր կեանք մտնում. բայց ինչ էլ լինի, ես ինչպէս որ իբրև ուսանող և ուղևոր վճռեցի բոլորին էլ անխտիր այցելել։

«Աղբիւր»ի խմբագրի հետ ունեցած տեսակցութիւնս աւելի ես կարճատև եղաւ։ Թիֆլիսի խմբագրական ասպարիզում գործողներից ես ստացայ այն մխիթարական տպաւորութիւնը, որ նրանք չյուսահատուելով կեանքի խոչընդոտներից աշխատում են։

Թիֆլիսի մասին էլ այսքանով բաւականանանք։ Այս մեր Կովկասի կեդրոնում շատերին տեսայ իմ նախկին ընկերակիցներից, որոնք Ռուսիայից կամ Եւրոպայից էին վերադարձել։ Ես կարող էի, եթէ հանգամանքներն ինձ ներէին, նրանց անցեալ յոյսերի ու ներկայի ու ապագայի մասին ընթերցողին հետաքրքրող բաներ պատմել ու գրել, նոյնպէս շատ նոր ծանօթների ու մի քանի հետաքրքիր ընտանիքների մասին, սակայն թող այս անգամ այսպէս անցնի։ Ես արդէն վաղուց ճանապարհի վրայ էի. քանի որ տակաւին Գերմանիայից ճանապարհ չէի ընկել, ես այնպէս էի հաշւում, որ թէև ուղևորութիւնս երկար, սակայն և հանգստանալու միջոց կունենամ այն քաղաքներում, ուր ընդհատելու եմ. բայց բանից դուրս եկաւ, որ ընդհակառակը՝ առաւօտուանից մինչև գիշեր այս ու այն կողմ վազելս ու բազմապիսի տպաւորութիւններս ինձ աւելի յոգնեցրին, քան ճանապարհը։ Եւ այսպէս՝ Թիֆլիսում անցկացրած վերջին օրերում ես այնքան յոգնած էի զգում ինձ, որ երեկոյեաններին այցելութիւն գնացած ժամանակներս հազիւ կարողանում էի քունս զսպել։ Գրելս էլ շատ երկարեց. ուրեմն շտապեմ։

Յ. Տ.-Միրաք.

(Կը շարունակուի)

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

ՋԱԼԱԼ-ՕՂԼԻ, 15 օգոստոսի.—«Այս տարի դժուար թէ ուսումնարան ունենանք», լսվում է շատերի բերանից, և այս անմխիթար խոստովանութիւնը չի ամաչեցնում մեզ։ Անցեալ տարի ասուեցաւ, խօսուեցաւ և ՚ի վերջոյ հազիւ յունվարին ուսումնարանը բացուեց. ընտրուեցան հոգաբարձուներ, հրաւիրուեցան ուսուցիչներ և յոյս կար, որ այսուհետև կանոնաւոր ուսումնարան կունենանք։ Սակայն այժմ ամէն յոյս ՚ի դերև է ելնում. ժողովուրդը շատ անտարբերութեամբ է վերաբերվում ուսումնարանի գործին։ Հասարակութիւնը, ասում են, չի ուզում տալ ուսումնարանին իւր խոստացած նպաստները, որով հոգաբարձութեանը դժուար կացութեան մէջ է դնում։ Հոգաբարձուներից մէկը, որ այնքա՛ն եռանդով աշխատում էր, տալիս է իւր հրաժարականը։ Ի՞նչ պիտի լինի մեր մատաղ սերնդի բարոյական ապագան։ Չէ՞ որ դրանց մասին մտածելը մեր առաջին պարտականութիւնն է։ Ջալալ-Օղլին, որ մի ամբողջ գաւառակի—(Լօռուայ, ուր մօտ 40 հայ-գիւղեր կան) կենդրոնատեղին է, միթէ բացի վատ օրինակներ տալուց լաւ օրինակ չպիտի՞ տայ։ Ջալալ-օղլին եթէ ուզենայ, կարող է ոչ միայն միդասեան, այլ և երկդասեան երկսեռ դպրոց ունենալ, եթէ բոլորը անկողմնապահ և առանց հակառակութեան վերաբերուեն դէպի ուսումնարանի գործը։

Մենք կարծում ենք, որ այդպէս շուտով չեն վհատուիլ, այլ բաց կանեն ուսումնարանը իւր ժամանակին և ապա ուսումնական տարուայ ընթացքում կը խնդրեն և, եթէ կարելի է, մինչև անգամ կը պահանջեն հասարակութիւնից այն նպաստները, որ նա խոստացել է։ Կարծում եմ, որ ամէն մի ջալալ-օղլեցի ետ չի կանգնիլ իւր տուած խօսքից, քանի որ իբրև ծնող, նրա սրտին մօտ պէտք է լինի իւր որդու կրթութեան գործը։ Վերջապէս, եթէ ուրիշ միջոցներ էլ չլինին, հոգաբարձութիւնը կարող է ուսումնարանի դրամագլխից գործ դնել, մսխել։ Ուսումնարանն ունի մօտ 6000 րուբլի դրամագլուխ—մուրհակներով, որոնց ստանալը շատ դժուար պէտք է լինի. մեր պատուական հոգաբարձուներին է մնում դատաստանական ճանապարհով պահանջել փողերը։ Վերին աստիճանի անբարեխղճութիւն է ուսումնարանի փողերն ուտել... Յոյս ունիմ, որ մեր հասարակութեան միջից ինձ ձայնակից և համամիտ մարդիկ շատ կը գտնուին, որոնք կաջակցեն հոգաբարձութեանը և ուսումնարանը յարատև պահպանելու գործը հաստատ հիմքերի վրայ կը դնեն։

Ջալալ-օղլեցի.

ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ

—

ՍԱԼՄԱՍ, 6 օգոստոսի.— Ազգերի պատմութեան մէջ մենք շատ անգամ պատահում ենք այնպիսի դէպքերի, որոնք մեզ ցոյց են տալիս թէ երբ մի երկրում մի գաղափար կամ դրութիւն կորցնում է իւր նշանակութիւնն և հալածվում է իբրև հասարակաց բարեկեցութեան խոչընդոտ, այդ գաղափարի համար պաշտպանները երբ համոզվում են, որ այլ ևս անզօր են կռուելու այդ հալածանքների դէմ, փնտռում են մի ուրիշ ետ ընկած տեղ, ուր առժամանակ տիրապետ են դարձնում իրենց դաւանած գաղափարները։ Պատմութեան ցոյց տուած այս ճշմարտութեանը մենք կը համոզուենք մանաւանդ երբ ուշադրութեամբ դիտենք կաթոլիկ եկեղեցու անցեալն ու ներկան։

Սկսած այն օրից, երբ Լուտերն և իւր հետևողները առաջին անգամ բարձրացրին իրենց ձայնն և բողոքը կաթոլիկ եկեղեցու դեղծումների դէմ, այն օրից կաթոլիկութիւնը կամաց կամաց կորցրեց իւր առաջուայ ոյժը Եւրոպայում։

18-րդ դարի վերջերն և 19-րդ դարի առաջին կէսերին արդէն նա իւր փառքից շատ ընկաւ։ Այդ ժամանակներում նոյն իսկ կաթոլիկ ժողովուրդը սկսեց իւր միջից դուրս ձգել կաթոլիկ եկեղեցու գըլխաւորի՝ այսինքն պապի թև ու թիկունք շատ կրօնական միաբանութիւնները, իբր վնասակար ժողովրդի առաջադիմութեան։ Բաւական է յիշել Ֆրանսիայի վերջին ժամանակուայ հանած հալածանքներն իւր սահմաններում գտնուած կրօնական միաբանութիւնների դէմ։ Ինչ բացատրութիւն կուզեն թող տան «ուղղափառ հաւատացեալներն» այդ վարմունքին, բայց ճշմարտութիւնը միշտ կը մնայ։

«Քրիստոնէութեան այդ անխոնջ ուղղափառ մշակները թողնելով եւրոպացիների հոգին դժոխքի անշէջ բոցերի մէջ (մի լազարիստ վարդապետի ասածն է) դիմեցին դէպի արեւելք՝ շարունակելու իրենց սուրբ գործը»։

Ահա այդ «ուղղափառներից» լազարիստ-կրօնաւորները այս 60 տարիներէն աւելի է բոյն են դրել Սալմաստ գաւառի ասորաբնակ Խոսրովայ գիւղում։

Շատ հետաքրքիր է նրանց այս մի քանի տասնեակ տարիների գործունէութեան արդիւնքը։

Խոսրովայ գիւղը 300 տնից աւելի բնակիչ ունի, որոնք առաջ նեստորական էին, իսկ այժմ՝ «ուղղափառ կաթոլիկ»։

Այս գիւղում լազարիստ կրօնաւորները ունին երկու գեղեցիկ քարաշէն եկեղեցի, մի Աստուածաբանական բարձրագոյն ուսումնարան և մի կուսանոց, որոնք գտնվում են լազարիստ 3 վարդապետների հովանաւորութեան տակ։

Թէ այս տասնեակ տարիների ընթացքում ինչ գործ են տեսել այդ «ուղղափառ» լազարիստները, այդ ցոյց կը տայ գիւղացիների բարոյական կեանքը։

Այդ գիւղացիների կեանքը բոլորովին նման չէ իրենց դրացի պարսիկ կամ հայ գիւղացիների նախնական, պարզ կեանքին։ Երևակայեցէք մի մեծ եւրոպական մայրաքաղաքի ամենաանբարոյական մի թաղը և դուք կունենաք Խոսրովայ։ Մարդիկ նման են Պարիզի «սամբակների», իսկ կանայք... Նանաներ և Ռօզներ են...

Էմիլ Զօլայի գրիչը պէտք է ներկայացնելու համար Խոսրովայի գիւղացիների կեանքը իւր բոլոր մանրամասնութիւններով... Արդեօք ի՞նչն է պատճառ, որ Սալմաստի նման մի ետ ընկած երկրում, ուր կարելի է գտնել գիւղական ամենամաքուր կեանք, միայն այդ գիւղը ներկայացնում է մի հակապատկեր։ Այդ հարցրէք «ուղղափառ» լազարիստներին։

Միայն մենք գիտենք, որ նեստորական ասորիները այդպէս չէին։ Կրօնը,—բարոյականութեան այդ պահապան հրեշտակը այստեղ գոյութիւն ունի միայն մի քանի խօսքերի մէջ՝

«Ս. պապը Քրիստոսի փոխանորդն է, անսխալ է... կաթոլիկ եկեղեցուց դուրս փրկութիւն չկայ և այլն...»

Բացի սրանցից լազարիստները սովորեցրել են գիւղացիներին ատելութեամբ վարուել իրենց դրացի «հայ-էջմիածնականների» հետ և աշխատել նրանց վնասել, որովհետև նըպատակը սուրբ է, և ո՞ւմ յայտնի չէ «նպատակը կ'արդարացնէ միջոցը» ճիզուիթութեան նշանաբանը։

Եթէ միայն բարեխնամ Շահի այն մասնաւոր հոգացողութիւնը չլինէր, որ ունի իւր հպատակ հայերի վրայ, այն ժամանակ տեղիս հայերի կեանքըն անտանելի կը լինէր։

Իսկ Աստուածաբանական ուսումնարանը պատրաստել է մի քանի ճշմարիտ Լոյոլայի աշակերտներ... Միայն ուրախալի է, որ նրանց բոլոր անբարոյական միջոցներն ապարդիւն են մնացել հայերին որսալու։

Կասկածելի են երկու հայ-կաթոլիկ վարդապետներ, որոնք բոյն են դրել Սավրա գիւղի հայերի մէջ և ունին մի քանի «աշակերտներ»։

Ցանկալի էր, որ տեղիս հայերը ինչպէս զգուշացել են լատին կրօնաւորներից, այնպէս էլ զգուշանային այդ «հայ-կաթոլիկ վարդապետներից»։

Անցորդ.

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

—

ԻՏԱԼԻԱ.—Վերջին ժամանակներս Իտալիայի և Ֆրանսիայի մէջ վիճաբանութեան մի նոր առիթ էլ է ծագել։ Պապական կառավարութիւնը Իտալացի կաթոլիկ առաքելութիւններին պատուէր է տուել, որ մերժելով իտալական կառավարութեան հովանաւորութիւնը, մտնեն ֆրանսիական կառավարութեան հսկողութեան տակ։

—Ֆրանսիական մինիստր-նախագահ Գօբլէի պատասխան-գրութիւնն պ. Կրիսպիի ծանուցագրին, Հռօմում խաղաղասիրական մտքով է բացատրըվում։

Հռօմում վերջին ժամանակներս խօսում են, որ իշ. Բիսմարկն իբրև թէ պ. Գօբլէին տեղեկացրել է, որ ինքն աշխատում է Ֆրանսիայի և Իտալիայի մէջ համաձայնութիւն հաստատելու մասին։

Եւրոպական մամուլի մէջ շատ անգամ լուրեր տարածուեցան, որ Իտալիայի և Անգլիայի մէջ դաշնագիր է ստորագրուած։ Բայց այդ լուրը հերքուեցաւ իւր ժամանակին։ Այժմ «Journal des Debats»-ն հաստատում է, որ Իտալիայի և Անգլիայի մէջ գաղտնի պայմանագիր կայ ստորագրուած Ֆրանսիայի դէմ։

—Իտալական լրագիրները հաղորդում են, որ եւրոպական պետութիւնների մեծամասնութիւնը Սպանիան պէտք է դասէ մեծ պետութիւնների շարքը, որից յետոյ Սպանիան իբրև թէ պաշտօնապէս կը միանայ եռապետական դաշնակցութեան։ Առ հասարակ կարելի չէ չնկատել, որ Իտալիան խիստ բարեկամաբար է վերաբերվում դէպի Սպանիան։

ԲՕԼՂԱՐԻԱ.— Սոֆիայից գրում են, որ բօլղարական կառավարչական շրջաններում խիստ զբաղուած են բօլղարական կառավարութեան բարեկամ պետութիւնների կողմից վերջերքս երևցած սառնութիւնից։ Կ. Պօլսի բօլղարական գործակալ Վուլկովիչը Կ. Պօլսից խիստ յուզիչ լուրեր է բերել, թէ Բ. Դուռն այսուհետև մտադիր է Բօլղարիայի հետ վարուել Ռուսիայի ցուցումների համեմատ։ Այդ պատճառով ասում են, որ իբրև թէ Ստամբուլովը յուսահատ ասել է. «Եթէ Աւստրիան և Իտալիան քաղաքական ներկայ դրութիւնն չպահպանեն երկրում, այն ժամանակ նա ստիպուած պիտի լինի Բօլղարիայի անկախութիւն հրապարակելով՝ Ռուսիայի հովանաւորութեան տակ դնել նրան։ Երկրի մէջ եղած աւազակային խմբերը համարվում են քաղաքական նպատակներով կազմակերպուած խմբեր և կարծում են, որ Բօլղարիայում շուտով ապստամբութիւններ կը լինին։

ԵԳԻՊՏՈՍ.—Գահիրէից ստացուած լուրերին նայելով, առաջիկայ 1889 թուի փետրվարի 1-ին լրանում է Եգիպտոսում հաստատուած խառն (բընիկներից և եւրոպացիներից) դատական հաստատութիւնների հինգամեայ ժամանակամիջոցը։ Ներկայումս արդէն սկսուած են դիպլոմատիկական բանակցութիւններ՝ այդ ժամանակամիջոցը երկարացնելու համար։ Եգիպտական լրագիրներից մի քանիսը հաղորդում են, որ Անգլիան ցանկանում է միայն կարճ ժամանակամիջոցով վերանորոգուել պայմանաժամը, իսկ Ֆրանսիան ընդհակառակն, կը ցանկար հինգ տարով վերանորոգել պայմանաժամը։ Հենց որ անգլիական կառավարութիւնը որոշակի կը յայտնէ իւր կարծիքները, եգիպտական կառավարութիւնն էլ կանէ իւր առաջարկները։

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Օտարոտի յայտարարութիւն.—Շօտլանդական մի լրագրի մէջ հետևեալ օտարոտի յայտարարութիւնն է տպուած. «Վարձով տըրվում է աղքատների համար մի տեղ, որ շաբաթական 30 շիլլինգ եկամուտ է բերում»։

⁂

Օտարոտի միտք.— Զւարճալի սիրահար անգլիացիների մէջ մի «Հանճարեղ» միտք է ծնուել. նրանք վճռել են, որ այսուհետև իրենց «չորքոտանի» բարեկամների արժանիքները որպէս հարկն է գնահատած լինելու համար, նրանց առաջի ատամները զարդարեն ոսկէ ապարանջաններով... բայց առանց թանկագին քարերի։

⁂

Օտարոտի ցանկութիւն.—Անցեալները մի անգլիացի Լոնդոնից բաց նամակ է ուղարկել Հոնկոնգ, խնդրելով, որ նոյն նամակը վերադարձնեն իրեն Ս. Ֆրանցիսկոյի և Նիւ-Եօրքի վրայով։ Այդ նամակը օտարոտի ցանկութեան տէր անգլիացուն վերադարձրին անցեալ օրեր։ Նամակն այդպէսով եօթանասուն օրուայ մէջ ճանապարհորդեց երկրի շուրջ, այսինքն ուղիղ 40 օր պակաս ժամանակամիջոցում կատարեց նա այն ճանապարհորդութիւնը, որ տասը տարի առաջ էին անում։

⁂

Օտարոտի կտակ.—Բուդա-Պեշտում այժմ խօսակցութեան առարկայ է դարձել մի բժշկի մի օտարոտի կտակը։ Դօկտոր Ադոլֆ Գոյդբէրգէր մահից յետոյ թողել է կէս միլիոնից աւելի գուլդէն։ Դրանից 20,000 ֆլօրին նշանակել է բարեգործական զանազան հաստատութիւններին անմիջապէս բաժանելու համար։ Մնացած գումարի մի մասը նշանակում է ժառանգներին, իսկ երկրորդ մասը նա թողնում է,—բառ առ բառ,—«անձեռնմխելի թողնել մինչև այն ժամանակ, մինչև որ այդ գումարի տոկոսները բաւական կը լինին աղքատ մարդկութեան վիճակը բարւոքելու համար։ Իսկ եթէ այդ գումարը չբաւականանայ, այն ժամանակ ամեն տեղ, ուր աղքատութիւն, կարիք կամ ուրիշ տանջանքներ երևան կգան, կտակում եմ անմիջապէս օգնել դրամագլխից»։ Կըտակարարի ժառանգները դատով պահանջում են, որ այդ կտակը համաբուն հանգուցեալի մտաւոր անառողջ դրութեան արգասիք։ Դատարանը գործը քննել է և վճիռը թողել է նոյեմբերի 1-ին յայտնելու։

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

«ՆՈՐ-ԴԱՐ»-ի

ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

—

ՊԱՐԻԶ, 24 օգոստոսի.—Քաղաքական շրջաններում դեռ էլի շարունակւում են այն լուրերը, որ իբր թէ գեներալ Բուլանժէն Ռուսիա կուղևորի իւր սպասած հեռագիրները ստանալուց յետոյ, բայց իսկապէս ոչ ոք չէ իմանում ոչ նրա իսկական մտադրութիւնները և ոչ էլ այն, թէ ուր է գտնվում նա այժմ։

ԴԻԺՕՆ.—Վէլօրում, Ուղագետի վրայ, երկու գնացքներ ընդհարուեց և գնացքը երկաթագծից դուրս գալուց 12 հոգի սպանուել և 12 հոգի անդամախեղ են դարձել։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ. 25 օգոստոսի.—Երէկ Նոցին Կայսերական Մեծութիւն Թագաւոր Կայսրը և Թագուհի Կայսրուհին Իրենց բոլոր Օգոստափառ Երեխաների հետ Մեծ Իշխան Վլադիմիր Ալէքսանդրովչի ուղեկցութեամբ բարեհաճեցան ուղևորուել հարաւային Ռուսիա։

Նոցին Մեծութիւնները Թագաժառանգի և Վլադիմիր Ալէքսանդրովիչ ու Գէորգիյ Ալէքսանդրովիչ Մեծ Իշխանների հետ հաճեցան Խարկովի և Օդեսսայի զինուորական շրջանների զօրքերի հանդէսների սահմաններն գնալ։

ՆԻԺՆԻՅ-ՆՈՎԳՈՐՈԴ.—Երէկ տօնավաճառային առևտրականների ժողովում բօրսային յանձնաժողովն որոշեց՝—խնդրամատոյց լինել, որ Բագուից մինչև Բաթում շինուելիք նաւթանցքի համար կազմուելիք ընկերութիւնն արգելուի, մանաւանդ որ այդ ձեռնարկի համար որոշուած ժամանակամիջոցն անցել է. խնդրամատոյց լինելու համար ընտրուած է հինգ հոգուց բաղկացած մի պատգամաւորութիւն։

ՍԷՆ-ՆԱԶԷՐ.—Այստեղի քաղաքային վարչութիւնն ընդունեց ռուսական «Ադմիրալ Կօրնիլով» նաւի սպաներին։ Քաղաքապետն առաջարկեց Ռուսաց Կայսեր կենացը, որի միջոցին լսուեցան բազմաթիւ ձայներ. «կեցցէ Ռուսիան»։

Խմբագիր-Հրատարակիչ

ՍՊԱՆԴԱՐ ՍՊԱՆԴԱՐԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՌՍՏՏԻ ՀԱՅՈՑ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԻ համար հարկաւոր է մի ուսուցիչ, որ պէտք է պարապի ուսումնարանի քառնհնգի չափ աշակերտների հետ ռուսերէն և հայերէն։ Յանկացողները կարող են դիմել «Նոր-Դար»-ի խմբագրութեան։

5—5

ԼՈՅՍ ՏԵՍԱՒ

Սամուէլ Սմայլս

ԲՆԱՒՈՐՈՒԹԻՒՆ

գերման. թարգմ.

ՓԻԼԻՊՊՈՍ ՎԱՐԴԱՆԵԱՆ

Գինն է 1 ր. 50 կ.

Նոյն թարգմանչի

Շմիտթ, Բենիամին Ֆրանկլին, 2 տիպ . . . . 40 կ.
— Գէօրգ Վաշինգտոն 2 տիպ . . . . 60 »
— Հոմերի Իլիականը, պատկերազարդ . 1 ր. 20 »
— Հոմերի Ոդիսականը, պատկերազարդ 1 ր. 50 »

(Ճանապարհի ծախքը թարգմանչի վրայ է)։

Վաճառվում են թարգմանչի մօտ՝ Тифлисъ, Садовая, Марiинно Анановское училище.

Հինգ տարի վարած լինելով կոմիսիոնէրական և վաճառականական գործեր, ցանկանում եմ ունենալ պաշտօն։ Պայմաններն յայտնել «Նոր-Դար»-ի խմբագրութեան.

5—4

ՊԱՏՐԱՍՏ Է

Եւ ներկայ 188⁸/₉ ուսումնարանական տարուայ ընթացքում լոյս կը տեսնին՝

Ա. Դասագիրք ազգային պատմութեան.

Բ. Դասագիրք հայոց լեզուի, որոնք կազմուած են համաձայն մեր ուսումնարանների համար կազմուած և հաստատուած ծրագրի ծխական դպրոցի II դասարանի I բաժանման համար։

Աշխատ. Յակոբ Ճաղարբէգեանց.

5—1

№ 75

ԻՍԿԱԿԱՆ ԳԱՆՁ Է

Մտաւոր, բարոյական ախտի և անբարոյականութեան զոհերի համար

ԻՆՔՆԱՊԱՀՊԱՆՈՒԹԻՒՆ

հեղ. դօկտոր ՐԵՏԱՈՒԻ

Ռուսերէն հրատարակութիւնը երեք գծագրութեամբ է և գինը 1 րուբլի։

Թող այս գիրքը կարդայ ամեն ոք, որ վերոյիշեալ ախտն ունի. նա շատերին փրկել է յայտնի կորուստից։

1 ր. ստանալուն պէս գիրքն հրատարակող Ր. Ֆ. Բիրէյի մագազինը Լէյպցիգում ուղարկում է գիրքը։ (Հասցէն. R. F. Bierey's Verlags-Magasin in Leipzig).

(M) 50—25

ՊՕՍՏԱՅԻՆ ԿԱՌՔԵՐԻ

երթևեկութիւնը պատերազմական-վրական ճանապարհով

1888 թ. մայիսի 15-ից մինչև նոյեմբերի 15-ը։

Թիֆլիսից դուրս է գալիս

Հինգ հոգու տեղ ունեցող կարէտը առաւօտեան ժամը 9-ին, Մցխեթի կայարանում գիշերելով հասնում է Վլադիկավկազ միւս օրը երեկոյեան ժամը 8-ին։

Նոյնպէս դուրս է գալիս առաւօտեան ժամը 7-ին, գիշերում է Դուշեթ կայարանում և Վլադիկավկազ հասնում միւս օրը ցերեկուայ ժամը 5-ին։

Վեց հոգու տեղ ունեցող օմնիբուսը դուրս է գալիս ցերեկուայ ժամը 4-ին, առանց գիշերելու, միւս օրը, երեկոյեան ժամը 7-ին հասնում է Վլադիկավկազ։

Նոյնպէս դուրս է գալիս Ճաշից յետոյ ժամը 5-ին և առանց Ճանապարհին գիշերելու Վլադիկավկազ հասնում է միւս օրը ժամը 8-ին երեկոյեան։

Վլադիկավկազից

Հինգ հոգու տեղ ունեցող կարէտները դուրս են գալիս առաւօտ. ժամը 9-ին, գիշերում են Մլէթի կայարանում և միւս օրը երեկոյեան ժամը 8-ին հասնում են Թիֆլիս։

Նոյնպէս առաւօտեան ժամը 7-ին դուրս են գալիս և գիշերելով Պասանաուր կայարանում, միւս օրը ժամը 6-ին երեկոյեան հասնում են Թիֆլիս։

Վեց հոգու տեղ ունեցող օմնիբուսները դուրս են գալիս ցերեկը, ժամը 4-ին Ճաշից յետոյ, առանց գիշերելու՝ միւս օրը երեկոյեան ժամը 9-ին հասնում են Թիֆլիս։

Նոյնպէս դուրս են գալիս երեկոյեան ժամը 5-ին և առանց Ճանապարհին գիշերելու, միւս օրը հասնում են Թիֆլիս երեկոյեան ժամը 9-ից 50 ր. անց.

—

ՆԱՒԱԳՆԱՑՈՒԹԻՒՆ

Շոգենաւային երթևեկութիւն Բաթումի, Օդեսսայի և Կ. Պօլսի մէջ։

—

Բաթումից գնում է

Երեքշաբթիները.—Կէս օրից յետոյ ժամը 4-ին, ուղիղ գծով, մտնում է Սուխումի և Նովօրօսսիյսկի նաւահանգիստները։

Հինգշաբթիները.—Կէս օրուայ ժամը 4-ին, ուղիղ գծով, Նովօրօսսիյսկի և Կերչի վրայով։

Շաբաթ օրերը.—Երեկոյեան 8 ժամերին, շրջանառու ընթացքով, բոլոր նաւահանգիստները պտտահելով։

Երկուշաբթիները.—Երեկոյեան արտասահմանեան գնացքով Կ. Պօլիս։

Բաթում գալիս է

Երկուշաբթի — Առաւօտը, Օդեսսայից, ուղիղ գծով՝ Կերչի և Սուխումի վրայով։

Չորեքշաբթի — Առաւօտը Օդեսսայից, ուղիղ գծով, Կերչի և Նովօրօսսիյսկի վրայով։

Ուրբաթ. — Երեկոյեան, Օդեսսայից, շրջանառու ընթացքով։

Կիրակի օրերը.—Առաւօտը Կ. Պօլսից։

Փօթիից գնում է Բաթում

Երեքշաբթիները. — Առաւօտեան ժամը 9-ին, Ղրիմ-Կովկասեան ուղղագիծ շոգենաւին միանալու, որ մտնում է և Սուխում։

Ուրբաթ՝—Երեկոյեան կամ գիշերը, շրջանառու Ղրիմ Կովկասեան Բաթում գնալու նաւը նաւահանգիստ գալուց յետոյ։

Շաբաթ օրերը. — Առ. ժամը 9-ին, Ղրիմ-Կովկասեան և Բումէլիա-Անատոլեան շրջանառու շոգենաւերին միանալու։

Բաթումից գնում է Փօթի

Չորեքշաբթի և կիրակի օրերը.—Նաւի դուրս գնալու ժամը որոշւում է Բաթումի նաւային գործակալութիւնը՝ նաւը Փօթիից գալուց յետոյ։

Բացի այդ, ամեն շաբաթ Օդեսսայից Ղրիմ-Կովկասեան նաւահանգիստներից գալիս են Փօթի որոշեալ ժամանակներում երթևեկող ապրանքակիր-մարդակիր նաւեր չորեքշաբթի օրերը, լուսաբացին, և գնում են ուրբաթ առաւօտները։ Նիկօլաեվից Օդեսսայի վրայով շաբաթ օրերը երեկոյեան Սեվաստօպօլ և Բաթում գալիս են նոյնպիսի նաւեր, որոնք Փօթի գալիս են ուրբաթ լուսաբացին և հեռանում է շաբաթ օրը երեկոյեան, վերադառնում է առանց Բաթում մտնելու Սեվաստօպօլի և Օդեսսայի վրայով գալիս է չորեքշաբթի երեկոյեան։

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ

Երթևեկութիւն «Թիֆլիս» կայարանում

Գնում է

Բաթում, պօստային.	8 ժ. 49 ր.	առ.
Բագու, „	8 ժ. 6 ր.	եր.
Սուրամ, ապ. մար. գն.	3 ժ. 21 ր.	ց.
Աղստաֆա, խառն. գն.	8 ժ. 20 ր.	ց.

Գալիս է

Բաթումից, պօստ.	10 ժ. 15 ր.	եր.
Բագուից, „	8 ժ. 6 ր.	առ.
Սուրամից, ապ. մարդ.	8 ժ. 24 ր.	առ.
Աղստաֆայից, խ. գն.	8 ժ. 18 ր.	եր.

ԲԺԻՇԿ ՄԻՍԱՔ ԱՐԱՄԵԱՆՑ

ՍԱՂԻՍԱՆԻՑ ԷՋՄԻԱԾԻՆ

Նկարագիր

ՈՒԽՏԱՒՈՐ ՈՒՂԵՒՈՐՈՒԹԵԱՆ

Բազմաթիւ փոփոխութիւններով.

Գինն է 50 կոպէկ

Դիմել «Նոր-Դար»-ի խմբագրութեան։ (Ա.) Բ—32

№ 12.

ԿԵՕԼԵՐԵԱՆ ՀԵՂՈՒԿ

ՄԼՈՒԿՆԵՐԻ (ԲԱՂԼԻՆՋ) ԵՒ ՈՒՏԻՉՆԵՐԻ ԴԷՄ

միակ անպայման արմատական և միանգամայն ամենաէժան, բոլորին մատչելի միջոց է այդ միջատների դէմ։

Վաճառվում է լիակատար երաշխաւորութեամբ

Ր. ԿԵՕԼԷՐ ԵՒ ԸՆԿ. ՄՕՏ, Նիկօլաևեան փողոցի վրայ։

Գաւառներում վաճառվում է բոլոր փոքր և շատէ նշանաւոր առևտրականների մօտ։

(M. 46,233) 3—2

ԴՕԿՏՕՐ ԺԵՐԱՐԻ ԵՐԿԱԹ

ՌՈՒՍԻԱՅՈՒՄ ԹՈՅԼԱՏՐԱԾ

Այս երկաթեայ դարմանն թեթևակի լուծողական լինելու առաւելութիւնն ունի. Պարիզի Բժշկական ճեմարանի հաշիւը ցոյց է տալիս, որ նա աջողութեամբ գործ է դրվում դէմքի դեղնութեան, արեան նուազութեան կամ անէմիայի դէմ։

Դէպօն գտնվում է Պարիզում, 8, rue Vivienne, և Ռուսիայի նշանաւոր դեղատներում։ 26—2

ԴՕԿՏՕՐ ԼԷՆԴԻԼԻ

ԿԵՉՈՒ ԲԱԼԱՍԱՆ

Մի սրուակի գինն է 1 ր. 65 կոպէկ։

ԴՕԿՏՕՐ ԼԷՆԴԻԼԻ ՕՊՊՕ ՊՈՄԱԴ ն և է Կօլդ-Կրէմից լաւ է մի ամանը 1 րուբլի.

ԴՕԿՏՕՐ ԼԷՆԴԻԼԻ ԲՕՆՁԵԱՆ ՕՃԱՌ ½ կտորը 50 կ., ½ կտորը 35 կ.

Ուղարկելու ծախսը առանձին է հաշվւում։ Վաճառվում է Ռուսիայի բոլոր դեղավաճառանոցներում և դեղատներում։ Գլխաւոր պահեստը բոլոր Ռուսիայի համար է Վ. ԱՈՒՐԻԽԻ մօտ, Պետերբուրգում, Սարէմեանյա, 4.

ԹԻՖԼԻՍՈՒՄ.—Դեղատնային ապրանքների վաճառման Կովկասեան ընկերութեան, և Գրիվնակի մօտ։ 46—46

(M.)

ՁԷՅԹՈՒՆՑԻՆԵՐԻ ՕԳՏԻՆ

ՎԱՃԱՌՎՈՒՄ Է

„ԱՐԵՒԵԼԵԱՆ ԵՂԱՆԱԿՆԵՐ“

Դաշնամուրի համար

1) Vivace
2) Հայոց եղանակ.
3) Բաշիբոզուկի եղանակ.
4) Յարձակումն.
5) Հայոց եղանակ.
6) Թիֆլիսի զուռնա.
7) Քրդի եղանակ.
8) Նախիջևանի ջրկիրների եղանակ
9) Իջաս պարսկական.
10) Պարսկական եղանակ.
11) Մոլդաւական պար.

Գինն է 1 րուբլի։ Ճանապարհածախսի համար պէտք է վճարել 11 կոպէկ մարկայով։

Դիմել «Նոր-Դար»-ի խմբագրութեան, Թիֆլիսում։

ВОСТОЧНЫЕ МОТИВЫ

для фортепiано

MOTIFS ORIENTEAUX

Pour le Piano

1) Vivace
2) Армянскiй мотивъ.
3) Башибузукскiй мотивъ
4) Нападенiе.
(5 Армянскiй мотивъ.
6) Тифлисская зурна.
7) Курдынскiй мотивъ.
8) Мотивъ Нахичеванск. водовозовъ.
9) Иджасъ, Персидскiй мотивъ.
10) Персидскiй мотивъ.
11) Молдавскiй танецъ.

Цѣна 1 руб. и 11 к. (марками).

Можно получать въ ред. «Норъ-Даръ», въ Тифлисѣ.

(Մ.) Х—53

Дозволено цензурою. Тифлисъ, 25-го Августа 1888 г. Տպարան Կովկաս լրագրի գրասենեակի։ Типографiя конторы газеты Кавказъ, Гол. пр., д. Читахова